



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**
2018 թվականի №
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԱՐԱԲԿԻՐ» ԶԲՈՍԱՅԳՈՒ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՆԱԶ
ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱԶՂԱՆԻ ԿԻՐՃՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՊՈՍՊԱԿԱՅԱՆԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի մայիսի 29-ի №04-ԴԳ-02/1775 գրությունը՝ կից փաստաթղթերով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
 - 1) Երևան քաղաքի «Արաբկիր» զբոսայգու և հարակից տարածքների կանաչ զանգվածների ոռոգման նպատակով Հրազդանի կիրճում գտնվող պոմպակայանի սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է եռակողմ կնքված էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (մատակարար), Երևանի քաղաքապետարանի (սպառող) և «Արթ-Կարշին» ՍՊԸ-ի (վճարող) միջև փոխհամաձայնեցված կարգով.
 - 2) Էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի

վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

3) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը վերջինիս ներկայացնում է Պայմանագիր կնքելու առաջարկություն՝ նրան տրամադրելով իր կողմից ստորագրված Պայմանագիրը՝ 3 օրինակից:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված Պայմանագրով նախատեսված կանխավճարի վճարման օրվանից մինչև փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 50 օրը.

2) էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 60 օրը.

3) էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 90 օրը.

4) էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ կառուցվող բազմաբնակարան շենքի, կամ կառուցապատվող թաղամասի միացման դեպքում՝ 300 օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Երևանի քաղաքապետարանին և «Արթ-Կարշին» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ